ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅՑԵՑ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵՑ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊՍ. ՉՈՒԼՋՅԱՆԸ

Կիրակի, մայիսի 18-ին, Երևման Ս. Խաչի փոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի փոնակատարությունների ծիրից ներս այս անգամ եկեղեցականաց դասի առաջնորդությամբ Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի ուխտապահ ժողովուրդը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը:

«Ս. Էջմիածնի խորհուրդը մեր հոգում ու մտքում վառ պահելու գիտակցությամբ, մեր նախնյաց ավանդությանը հավատարիմ, այսօր մենք ևս ուխտի ենք եկել՝ վերստին վերանորոգելու և վերահմաստավորելու համար մեր անցյալն ու ներկան: Մեր աղոթքն է, որ շարունակենք հավատարիմ մնալ Առաքելական մեր Մայր Եկեղեցուն, շարունակենք պահել մեր հոգևոր միասնությունը և տեղի չտանք ազգակործան մոլուցքով կուրացած օտարածին ու այլադավան կրոնական ու քաղաքական շարժումներին»,- ասաց Սրբազան Հայրը:

Օրը հիշարժան էր նաև նրանով, որ հընթացս Ս. Պատարագի կատարվեց հինգ սարկավագների քահանայական ձեռնադրություն և օծում: Ձեռնադրող Սրբազան Հայրը մեկառմեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Սարգիս սրկ. Կնյազյանը վերակոչվեց Տ. Խաչատուր քահանա, Արմեն սրկ. Պետրոսյանը՝ Տ. Նշան քահանա, Արամ սրկ. Ղեւոնդյանը՝ Տ. Շմավոն քահանա, Լևոն սրկ. Աղոսյանը՝ Տ. Կիրակոս քահանա, Հակոբ սրկ. Հովհաննիսյանը՝ Տ. Գրիգոր քահանա: Սեպուհ Սրբազանն իր քարոզում հորդորեց նորընծաներին լծվել ծառայասիրության և անմնացորդ նվիրումով ու սրբությամբ կրել Հիսուս Քրիստոսի քաղցր լուծը:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց Տ. Խաչատուր և Տ. Նշան նորաօծ քահանաների վեղարի փվչության և աբեղայի օրհնության կարգը: